



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
✓ 466


1999

ԳՐԱՆՑՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ

b1

ՆԻՒՐԵՆԲԵՐԳԵԱՆ

۲۰۹



ԱՐԵՍԻ ԳՈՒԼԱԿԱՆԱՅ

ԹԻԳԼԻԱ

ՏԱՐԱՆԴԻ ԱՊՈՒԱՅԻ ՎԱՐԴԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ

1881



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵԿ

ՆԻԿԹԵՆԱԲԵՐԳԵԱՆ

Լ 1881 Ապրիլ 1 Հայոց Հանրապետության օնցության



1628.

ՔԱՐԴՄԱՆԵՑ ՌԱՍՏԵՐԵՆԻՑ

ԱԿԱДЕՄԻԱ ԳՈՒԼԻԱՆԿԵԱՆԻՑ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՊՎ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵԽ ԸՆԿ.

1881

ՊԵՂԱ ՁՅԱԳԱՐՄԱՐ

ԺԱՇՎԱՅԱԺՎԱՋ

Դозволено Цензурою. Тифлисъ. 1 Октября 1881 г.

28.467

գ 466. աօ

Tip. M. Вартанянца и К°, Троицк. пер., д. № 11.

ԳՐԱՆԱԴԱՅԻ ԶՈԲԵՐ.

Հերիաթ.

Գրանադան ունի այնպիսի գանձեր, որոնց
նմանը ոչ միայն Սպանիայում, առ եւ այլ սփյար-
հում չ'կայ. այդ գանձն ~~Ալլեամբան~~, Սաւի-
տանական երեւելի պալատը:

Ալգամբրա տանող ճանապարհն սկսվում է
բարձր գուներով, աղեղնաւոր յաղթական տես-
քով շինուած: Գուների յետեւ սարի վերայ նեղ
ճանապարհն է ոլորվում, թփիկներով ծած-
կուած: Ճանապարհի երկու կողմերում քարից
նստարաններ են կտրուած եւ շինուած են ջրբուխ-
ներ (շագրուան), ուր յոգնած ճանապարհորդը
կարողանայ հանգստանալ եւ զովանալ մաքուր,
սառ ջրով: Սարի գագաթին կանգնած է ահա-
գին քառանկիւնի աշտարակ, հենց որը իբրեւ
պալատի մուտք է ծառայում: Աշտարակի յետեւ,
փոքրիկ հրապարակի վերայ գուրս են փորուած
երկու ջրհորներ: Նոցանից մեծը միշտ լի է, մին-

չեւ անգամ ամենաշոք օրերին, պարզ եւ սառ
ջրով: Ջրհորի մօտ գտնվումէ աղբիւրը, որ նո-
րան լցնումէ: Ամբողջ Գրանադայում ուրիշջուր
չեն խմում: բացի ալգամբրեան աղբիւրից, եւ
գէպի այնտեղ տանող ձանապարհը ամբողջ օր-
ուայ ընթացքում ջրբերներովլիքնէ լինում: Ջրբեր-
ները ջուր են կրում ջորիներով եւ իրանց ուսե-
րի վերայ:

Պեղրօ Գիլը, այդ ջրկիրներից մէկը, մի կար-
ճահասակ, գանգուր մազերով մարդ էր. նորա
ոտները ծուռ—ծուռ էին, ինչպէս բոլոր ջրկիր-
ներինը, որոնք երեխայութիւնից սկսած իրանց
արհեստներով են պարապլում: Երբ Պեղրօն ե-
րեխայ էր, փոքր հասակ ունենալու համար նո-
րան Պեղիգէլ էին կանչում: Նա վազուց արդէն
մեծացել եւ ողջ գերդաստանի փոքրիկ Պեղիգէլ-
ների հայր էր գարձել, բայց ոչ ոք չէր մոտա-
ծում անգամ նորան իւր սեպհական անունով
կանչել: Պեղիգէլը, ինչպէս էլ մենք պէտք է մեր
ջրբերին անուանենք, սկսեց մի մեծ կաւէ ամա-
նով ջուր կրել: Աշխատասիրութեան եւ խնայո-
ղութեան շնորհիւ, շուտով կաւէ կուժը փոխուե-
ցաւ ուրիշ աւելի գեղեցիկ ամանի, իսկ մի փոքր
յետոյ Պեղիգէլը իւր զբոսանքը գէպի աղբիւրը
կատարում էր ուսին գրած փոքրիկ տակառով:
Մի քանի տարի նեղութիւնից եւ զրկանքից յե-
տոյ, Պեղիգէլը մի էշ ձեռք բերեց: Պստիկ, ցած-

լիկ եւ ծուռոտն էշը, իւր տիրոջ պէս, տիրոջ
համար անգին էր—գին չունէր: Այժմ Պեղիգէլը
քայլումէր գէպի աղբիւրը իւր չորքոտանի օգ-
նականի հետ: որի կողքերից կախ էին ընկած ջր-
լով լի երկու տակառիկներ, ծածկուած արմաւենու
թարմ տերեւներով: ծանր բեռն այլեւս նորա սեպ-
հական ուսերը չէր ճնշում, քիչ էր մնում: որ
նա իրան ամենաբազգաւոր մարդը համարէր երկ-
րիս երեսին: Կարծես Պեղիգէլի ձայնն էլ մի
ուրիշ տեսակ ոյժ ու հնչումն ստացաւ՝ սկսած
այն ժամանակից, երբ ծանր տակառիկը դադա-
րեց նորա մէջքից կախ ընկնել. երբ նա կտնչում
էր «այ ջուր, նոր» սառող ջուր», Ո՞՛կ՝ կամենայ ալ-
գամբրեան աղբիւրի ջուր»: Նորա աղաղակը սուր
ձայնով տարածվում էր ամեռջ փողոցում: Երբեմն
փոխանակ կանչելուց մինչեւ անգամ երգում էր:
Բայց, աւաղ, երկրիս վերայ կատարեալ բաղ-
դասորութիւն չկայ, Պեղիգէլն էլ իւր հոգսերն
ունէր, ինչպէս եւ ամեն—մի մահկանացու: Պե-
ղիգէլի հոգսերը քիչ կարեւոր չէին. ինչպէս մենք
առաջ նկատեցինք, Պեղիգէլը մեծ ընտանիք ու-
նէր: եւ այս գերգաստանի բոլոր անգամները
տիրապետում էին կանոնաւոր ստամբսերի եւ
անսպառելի ախորժակի: Այդպիսի ախորժակին
բաւարարութիւն տալու համար Պեղիգէլն էր պար-
տական հոգալ, բացի այդ՝ բոլորովին միայնակ
էր, որովհետեւ նորա կինն ամենեւին չէր ցան-

կանում այդպիսի դատարկ բաների համար ան-
հանգիստ լինել: Տիկին Պերիգէլը իւր երիտասարդ
ժամանակ ամբողջ նահանգում առաջին գեղեց-
կուհին էր համարվում, հրաշալի պարում էր
ֆանտանչո* եւ շատ լաւ ածում էր բամբոփ վե-
րայ: Այդպիսի տազանդ ունենալով, նա բոլորո-
վին չէր կամենում հողի տակ թաղել նորան
տնտեսութիւնով պարապելով: Սոլորաբար իւրա-
քանչիւր կիրակի, իւրաքանչիւր հեղեցական տօ-
նի, եւ, եթէ կամենաս, համարեա շաբաթուայ
եօթն օրերը, տիկին Պերիգէլը գնում էր մի որ
եւ է տեղ զբունելու եւ պարում էր այնտեղ մին-
չեւ մէջ գիշերը, երեսի վերայ թողնելով ամեն—
մի հոգացողութիւն՝ իւր համբերող մարդի եւ
հիւանդու երեխանց մասին: Բացի գեպի պա-
րերը մեծ սէր ունենալուց, տիկին Պերիգէլը
յայտնի էր իւր անմաքրութեամբ, սիրում էր եր-
կար քնել, աներեւակայելի ծոյլ էր եւ, այդ բոլո-
րից յետոյ, առաջին տեսակ խառնակիչ էր,—եւ
մինչեւ այն աստիճան, որ մոռանում էր ոչ միայն
իւր մարդին, տնտեսութիւնը, երեխանցը կամ
պատարագը, այլ պատրաստ էր թողնել ֆանտան-
չոն եւ բալոն, եթէ միայն ժամանակ գտնէր
մինչեւ կշտանալը շատախօսել եւ դուրս թարմ
ջրի ուղարկել մի որ եւ է սանամօր կամ հարե-
ւանուհու իւլուայ:

* Պարի անուն է:

Եւ այդպիսով, ընտանիքը կերակրելու բո-
լոր հոգսերն ընկնում էին Պերիգէլի վերայ միայն,
իսկ նորա զլխովն անգամ չէր անցնում մի որ
եւ իցէ սասափիկ միջոցով ամուսնուն հրաւիրելու
իւր տնտեսական պարտականութիւնները կատա-
րելու:

Պերիգէլն անասելի սիրում էր իւր որդւոցը՝
իրան ընդունում էր մահկանացուներից ամե-
նաերջանիկը՝ կեղտոտ, բոկոտն եւ գծիչ չար որդւոց
մէջ: Իւրաքանչիւր տօն օր Պերիգէլը իր որդւոց
և ետ գնում էր մի որ եւ է պտղաբեր այգի, որ
նոցա ուտեցնէ խնձոր, արմաւ եւխաղող: Սովո-
րաբար երեխաններից մէկին ուսին դրած էր տա-
նում, միւսի ձեռքից բռնած, իսկ մնացեալները
յետեւից վազում էին, մաշուած վերաբկուից կախ
ընկնելով: զաւակասէր հայրը բռնով փողը գեր-
պանումն զնգզնգացնում էր, որն ամբողջ շա-
բաթուայ միջոցում այդ զբունքի համարէր
ժողովուել:

Մի անգամ, օրն առհասարակ շռք էր, միայն
բանւոր մարդիկ եւ աղքատների խմբեր սովորու-
թիւնից գուրս երեւում էին փողոցում, իսկ բո-
լոր հարուստ մարդիկ տներում փակուած նստած
էին: Երեկոն վրայ հասնելուն պէս սկսեցին հրա-
պարակները զբունողներով լցուել: երբեմն այս-
տեղ, երբեմն այնտեղ տարածվում էր գիթառի
ճռճռոցը, լսվում էր կանանց ծիծաղը եւ կամա-

կատար տղամարդոց կամավայր շնորհեց իւրաքանչ-
յիւր բոլէ ջուր էր պահանջվում. Պղիթէլլ թէ
եւ արդէն վարուց էր զգում որ ոտները թու-
լանում էին եւ մշջքը ցաւում սակայն վճռեց
էլի միանգամ գնալ աղբիւրը: «Թող, մանուկ-
ները կիրակի օրն աւելի լաւ ուրախանան.» ՀՀնցաց
նա, իրան լաւ ծանօթ ճանապարհով քայլելով:
Նա շաւկով կամաց բարձրացաւ գէպի սարը,
իւր սովորութեան պէտ ցածր երգելով եւ քշելով
իւր երկարականջ ընկերը:

Դիշերը պայծառ եւ տաք էր. այդպիսի խաղաղ ժամանակ ոչոք չէր երեւում, միայն ճիշտ աղքիւրի մօտ ննտած էր մի մարդ, մաւրի պէս հագնուած. Ոերիգէլն այնպէս զարհութեցաւ, տեսնելով փայլուն լուսնի լուսով, մի անձանօթ, որ կամենումէր շուռ գալ եւ դատարկ տակառիկներով քաղաք վերադառնալ: Բայց անձանօթը կամաց վերկացաւ տեղից եւ, մօտենալով ջրբերին, մեղմ ասաց. «բարեկամն, ես հիւանդ եւ տկար եմ, ինձ քաղաք հասցրու. ես քեզ կ'վճարեմ երկու անգամ աւելի նորանից, ինչ որ կարող ես ջրից ստանալ:»

Պերիգէլը գթացող մարդ էր, — նաւցաւեցաւ նեղացած ճանապարհորդի վերայ. միւս կռզմից էլ խոստացած պարզեւն էր նորան հրապուրում. — խաբում. Մտքումը սուրբերին խնդրելով ներել իր մեղքը, անհաւատին նստեցրեց իւր իշխ. վե-

բայ եւ ճանապարհ ընկալ դէպի քաղաք:

Թժբաղդ մաւրն այնպէս թոյլ էր, որ ջրկերը
հարկագրուած: Էր ողջ ճանապարհին նորան
բռնած տանելք ամ ու ու այլ այլ այլ այլ:

Քաղաք մոնելու ժամանակ մաւրը Պերփէ-
լին խնդրեց, որ մի գիշեր իւր մօտ ընդունի:
Պերփէլը շատ անբաւական եղաւ հիւրի անսպա-
սելի եւ անգուշակելի խօսքից, բայց ի՞նչպէս
չէր ընդունել հիւանդ մարզին, թէ եւ նա լինէր
սաւր, եւս առաւել, որ հիւրասիրութեան հա-
մար լաւ վարձ էր նշանակուած: Բայց այստեղ
յանկարծ յիշեց իւր բարկացկոտ կնոջը... .

Վիզը քորելով, անծանօթին իւր տուն տա-
րաւ:

Փոքրիկ Պերկգէլները գէպի դուռը վազեցին, լսելով իշխ ծանօթ ոտնաձայնը, բայց սարսափած յիտ փախան, երբ անծանօթ մարդ տեսան, գլուխը փաթաթանով պատաժ: Նոքա մօրմօտ վազեցին տեսածները պատմելու:

Տիկին Պերկգէլը շտապով դուրս ընկաւ փողոց եւ մարդի վերայ հեղեղի պէս յիշոյներ թափեց:

— ի՞նչպէս համարձակուեցար անժանօթ՝ մարդին տուն քաշտալ, այն էլ հիւանդին, եւ այդ բոլորից յետոյ անհաւատին . . . ազաղակում էր նա, — երեսի դու անշուշտ ուզում ես, որ արեգաների ձեռոքն ընկնես:

— Դադարի՞ր, կի՞ն: Հօ չի՞ կարելի հիւանդ
ճանապարհորդին փաղոցը գցել պատասխանեց
Պերիգէլը, մտրակը պտոյտ ածելով:

Տիկին Պերիգէլը լռեց. նա գիտէր, որ մի
քանի հանգամանքներում՝ չ'նայելով մտրդի խո-
նարհութեանն ու բարսթեանը, նա էլ նոյնպէս
կամակոր էր՝ ինչպէս իւր էշ:

Պերիգէլը հիւրի համար խաղաղ անկողին
պատրաստեց եւ հրաւիրեց հաց ուտել, բայց նա
նշանով շնորհակալութիւն արեց տանտիրոջը եւ
ոչինչ չուզեց: Հենց որ մաւրը պառկեց, իսկոյն
նորա վերայ խիստ գոզ եկաւ, բայց երբ փոքր
ինչ ուզզուեցաւ, ասաց. «Ինձ թվումէ, որ վերջս
եկել է. երբ որ մեռնեմ, քեզ մօտ վերառ այս
բաները,—ես այս ընծայումեմ քեզ՝ հիւրընկա-
լութեանդ շնորհակալութեան համար:» Այս խօս-
քերով արձակեց իւր լայն վերարկուի կոճակնե-
րը եւ տուեց Պերիգէլին սանդալի ֆայտից շի-
նած մի փոքրիկ արկդ:

Աստուած ձեղ առողջութիւն պարգեւ է
եւ գուք օգուտ քաղէք ձեր ունեցածից. աղա-
ղակեց գժաշարժուած ջրերը:

Մաւրը գլուխը շարժեց եւ ձեռքը վրան դը-
րեց, իբրեւ թէ կամենալով բացատրել, թէ արկ-
զում ինչ կայ, բայց այդ րոպէին ուշագնացու-
թիւնը նոր զօրութեամբ կրկնուեցաւ եւ մի քա-
նի վայրկեանից յետոյ մաւրը հոգին աւանդեց:

Տիկին Պերիգէլը բարկութիւնից իրան չէր
ճանաչում:

— Այ, տեսնում ես, թէ քո յիմարութիւնը
քեզ մինչեւ որտեղ է հասցըել, բղաւեց նա մար-
դի վերայ: — Դու ամենայն տեղ ես մտնում, ուր
քեզ չեն հարցնում, եւ իւրաքանչիւր հանդիպո-
ղին ծառայելու համար պատրաստ ես՝ ոչնչի հա-
մար եւ ոչնչի մասին... Մեր ճարն ի՞նչ կ'լինի,
երբ գիակը մեր տանը գտնեն... Անշուշտ կ'ա-
սեն, որ մենք ենք սպանել, բանտ կ'նսացնեն
եւ, Աստուած գիտէ, զուրս կըթողնեն երբ եւ
իցէ: Եթէ գուրս էլ թողնեն, աներկբայ եմ, որ
պօլիցիական աստիճանաւորները մեր տունը կը-
քանդեն, եւ մենք հարկադրուած կ'լինենք ան-
տուն թափառել, ինչպէս աղքատները...

Խեղձ Պերիգէլը շատ յաւ տեսնում էր, որ
այս անգամ կինը ճշմարիտ էր եւ գառնապէս
իրան յանդիմանում էր այն պատճառաւ, որ մաւ-
րին բերեց:

Վերջապէս նորա մտքովը մի բաղդաւոր միտք
անցկացաւ. «Ախնչեւ առաւօտ գեռ երկար ժա-
մանակ կայ», մտածեց նա, «ես կարող եմ գիա-
կը տանել Քաէնիլի ափը եւ նորան այնտեղ ա-
ւազի մէջ թաղել, —ոչ ոք չի տեսնիլ: Ոչ ոք
չտեսաւ, երբ մարդին բերում էիր, հետեւաբար,
ոչ ոքի գլխից չի անցնիլ, որ մեր տանը ննջե-
ցեալ կայ»:

Ինչպէս մտածուեցաւ, այնպէս էլ կատարուեցաւ: Ամուսինները դիակը խսրի մէջ փաթաթեցին, ինչպէս պատում են ապրանքի հակը՝ թռկով կապեցին, իշխ վերայ գցեցին եւ Պերիգէլը քաղաքից դուրս գնաց, ամեննեւին չ'կասկածելով, որ նորան հետեւում էին երկու հետաքրքրուած աչքեր:

Պերիգէլի պատուհանի հանդէպ բնակլում էր մի սափրիչ (դալլաք), անունը Պերիլո Պեդրուց: Ամբողջ Գրանադայում չէր կարելի գրտնել մի մարդ, որը լինէր այնպէս հետաքրքիր եւ սիրէր զրպատութիւններ, ինչպէս պարոն Պեդրուցօն:

Պեդրուցօն լսեց, որ հարեւանը տուն դարձաւ անսոլորապէս ուշ, լսեց աղաղակներ, որոնցից յետոյ հանդիպեցան կինն ու որդիքը, եւ, քիթը պատուհանից դուրս հանելով, տեսաւ, որ Պերիգէլը մի անծանօթ մարդ քերեց իւր տուն: Այդ գաղտնի այցելուն այնպէս վրդովեց պատուելի ոտիրիչին, որ նա պատրաստ էր ողջ գիշեր պատուհանի մօտ ցցուել, եւ միայն կնոջ ստիպողական հրամանը հարկադրեց նորան իւր տեղը թողնել եւ անկողին մտնել: Բայց Պեդրուցօն աչքերից քունը փախաւ. ամեն—մի հինգ րոպէում նա տեղից վեր էր թոշում եւ լուսամուտի մօտ վազում, որ տեսնի, թէ հարեւանի տանն ի՞նչ է լինում: Էլ ի՞նչ ասել կ'ուզէ, որ

Պեդրուցօն տեսաւ, թէ ինչպէս Պերիգէլը տանից դուրս տարաւ մի ծանր բան, խսրի մէջ պատած: Նկատեց, որ աւանակը հազիւ էր տոները շարժում ծանր բեռի տակ եւ գլուխը կոտրում էր, որ իմանայ, թէ խսրի մէջ ի՞նչ կարող էր լինել: Եւ ահա շուտով հագնուելով, Պեդրուցօն գուներից դուրս պլուաց եւ Պերիգէլին հետեւեց, իրան հեռու պահելով եւ աշխատելով աննկատելի մնալ: Այս կերպով նա հասաւ մինչեւ Քոէնիլ եւ տեսաւ, թէ ինչպէս Պերիգէլը մաւրին թաղում էր:

Իւր արած գիւտով բաւական մնալով Պեդրուցօն տուն գնաց եւ հազիւ կարողացաւ մինչեւ լոյսն սպասել: Սովորականից աւելի վաղ վերառաւ-կոնքը (լագան), կռան տակն առաւ ածելիներով եւ մկրատներով պատեանը եւ բոլոր ուժով վազեց գործին: բայց նախ եւ առաջ դաստաւորի մօտ մտաւ:

Դատաւորը հենց նոր էր անկողնից վերկացել, երբ մեր աշխայժ սափրիչը յայտնուեցաւ նորա մօտ համբաւներով: Պեդրուցօն աթոռը մօտ քերեց, գոգնոցը կապեց եւ, կոնքը գնելով պատուելի աստիճանաւորի կզակի տակ: Ակսեց սապնելու հետաքրքրական գործողութիւնը:

— ՀՇ, ի՞նչ նորութիւն կայ, հարցրեց դատաւորը:
— Զարմանալի՞ բաներ, չլսուած գործեր,

սկսեց Պետրուցօն, որը ներկայացնում էր իբրև շրջող լրագիր ողջ Գրանադայի համար, — յափշտակութիւն եւ սպանութիւն մի գիշերուայ մէջ...
— Ի՞նչպէս, դու կատակես անում, թէ ուզիկ ես խօսում, գոչեց դատաւորը, չ'նկատելով
որ սապոնն ուզգակի դէպի բերանն է գնում,
— Ես բոլորովին ճշմարիտ եմ խօսում եւ
պատրաստ եմ երդուել այն մասին, որ այս գիշեր ջրբեր Պերիգէլը թալանեց, սպանեց մի մաւր
եւ աւազի մէջ թաղեց:
— Իսկ ի՞նչով կապացուցանես այդ, տսքացաւ դատաւորը:

— Խաղաղ նստեցէք, պարոն, խօսեց սափրիք, — ինձ դեռ չի պատահել որ մէկի կտրեմ, եւ ես ամենեւին չեմ ցանկանում ձեր թանգարին արիւնը թափել:

Դատաւորը փոքր առ փոքր հանգստացաւ, եւ սափրիք բոլորը կարգով պատմեց, ինչ որ իրան յաջողել էր անցեալ գիշեր տեսնել:

Դժբախտաբար պատահեցաւ, որ դատաւորը դէպի որը դարձաւ Պերուցօն, ամբողջ Անդալուզիայի մէջ ամենատնիդժն էր եւ ունէր նորա իրաւունքների մասին ամենազարմանալի հասկացողութիւն:

Պետրուցօն պատմութիւնը լսելով, դատաւորը մոածեց, որ մաւրին սպանելով պէտք է մեծ փող ստացուէր եւ մոքումը դրեց՝ մի կերպով

այդ փողերին հասնել: Նա ամենեւին չէր կամենում մարդասպանին իսկոյն եւ եթե ենթարկել օրէնքի հալածմանը. այդ դէպեռում կողոպտած հարատութիւնը գանձարանը կ'մտնէր. ոչ, փող նոյն իսկ դատաւորին էր հարկաւոր, եւ նա մըտածում էր, որ եթէ մարդասպանից որսն առնէ, այն ժամանակ նա դորանով արդէն բաւական պատժուած կ'լինի:

Գործելու ձեւը իւր գլխի մէջ վճռելով, դատաւորը իւր մօտ կանչեց ամենաշուտափոյթ եւ իրան անձնատուր պօլիցիական աստիճանաւորին եւ հրամայեց չարագործին բերել:

Խեղճ Պերիգէլը, ցանկալով անախորժ պատահմունքներից հեռանալ, մեծ պտոյտ արեց եւ անցաւ Գրանադայի տասն եւ երկու դռներից մի քանիսը, մաւրին դռւրս տարած դռների դիմացիններով: Նա դեռ չէր կարողացել տուն հասնել, երբ իւր չղրքուտանի ընկերոջ հետ միասին քռնուեցաւ եւ դատաւորին ներկայացուեցաւ:

Դատաւորն ընդունեց դատւողին ամենախիստ դէմքով:

— Նու մարդասպան, յափշտակող, գոչեց նա Պերիգէլի վերայ, որի ոտներն ահից տակը չէին կանգնում: Դու էլ չե՞ս կարող պատժից ազատուել: Բանն այնպէս պարզ է, ինչպէս լոյս ցերեկը: Օրէնքով դու պիտի կախուես, բայց դէպի կինդ ու մանկահասակ որդիքդ ունեցած ցա-

ւակցութիւնից ես կամենում եմ քեզ փրկել եւ
պատրաստ եմ հաւատալուա, որ սպանառով եղել է
մաւր, անիծեալ անհաւատ եւ մեր հաւատին
թշնամի, եւ որ գունորդան մահու հարուած ես
տուել կրօնի մասին վիճելիս, — այդ սպանութիւն
չէ նշանակում: Տեսնում ես, ես ողորմած եմ եւ
չեմ կամենում զուր տեղը քեզ պատժել բայց
միայն գու պէտք է այս բոպէիս այս սիդանի վե-
րայ դնես այն բոլորն՝ ինչոր մաւրից վերցրել ես, —
իսկ այնտեղ թօղ անհաւատն իրան համար Քսէ-
նիի աւագի մէջ պառկի եւ սպասի մինչեւ Քրիս-
տոսի երկրորդ գալուատի: Պատասխան կամ ան-
կամ Պերիգէլը բոլոր սրբերով երդուեց իւր ան-
մեղութեան համար եւ պատմեց բոլոր հանգտ-
մանքները, որոնցից առաջացաւ մաւրի մահը:
Դատաւորը, սակայն, չ' լինեց նորա երդում
ներն ու հաստատութիւնները:
— Դեռ կամենում էլ հս ինձ հաւայնել, որ
սպանուածը փող չ' ունէր:
— Երդ փում եմ իմ հոգու փրկութեամբ, որ
մաւրը ոչ ինչ չ' ունէր, բացի սանդալի փայտից
շինուած փոքրիկ տրկղից, պատասխանեց Պերի-
գէլը:

— Սանդալի փայտից արկղիկ բղաւեց դա-
տաւորը, եւ նա երեւակայեց զանազան թանգա-
գին իրեր, որոնց պէսերը կարող էին սյդպիսի
արկղում գտնուել:

— Ուր է այն, ուր, իսկոյն այստեղ բե՛ր կամ
թէ չէ կ' հրամայեմ քեզ այնքան ծեծել, մինչեւ որ
ցոյց կըտաս:

— Տէր ողո՞րմած Աստուած, ահա վերցրէք,
պատասխանեց Պերիգէլը, արկղիկը դուրս հանե-
լով, — ես կամենում էի այն մաւրի հետ թաղել,
բայց մոռացայ:

1628
Ուրախութիւնից գողգողալով, դատաւորն
արկղիկը բացեց, բայց, փոխանակ յուսալի գան-
ձերի, նա այնտեղ գտաւ կիսայրուած իստակ մոմ
եւ փոքրիկ մագաղաթի ծրար, գրուած արաբական
տառերով եւ կնքուած իստակ մոմով: Այդպիսի
անյաջողութիւնից բարկացած, դատաւորը հրա-
մայեց Պերիգէլի ողջ տունը տակն ու վրայ անել,
բայց այնտեղ էլ պահուած գանձի հետքերը չե-
րեւեցան: Կամայ — ակամայ ստիպուած էին հա-
ւատալ, որ մաւրն աղքատ էր եւ նորանից ոչ-
ինչ չէր մնացել, բացի փոքր արկղից:

Արկղիկը մագաղաթի եւ մոմի հետ Պերիգէ-
լին վերադարձուեցաւ, բայց դատաւորը նորա էշը
վերցրեց մի քանի դատաստանական ծախսերի
համար, չ' ուզելով իւր նեղութիւնները բոլորովին
՚իզուր կորցնել:

Եւ այդպէս, Պերիգէլը գարձեալ աղքատա-
ցաւ, գարձեալ ստիպուած էր իւր սեպհական
ուսերով ջուր կրել: Նա օրէնը հարիւր ան-
գամ բարձրանում էր սարի վերայ եւ իջնում: Փոք-

ըիկ խղճուկ մարդի բնաւորութիւնը բոլորովին փոխուեցաւ այդ անյաջողութիւններից. առաջուայ կատակներն ու երգերը մոռացուեցան: Պերիգէլն առաւօտեան գեռ երկիւզով էր նայում բայց ճաշից յետոյ, երբ արեգակն սկսեց անողորմ այրել եւ երբ յոգներուց ոտները կոտրատվում էին, նա սաստիկ բարկացաւ եւ սկսաւ բոլոր աշխարհի դէմ կատարեալ նախանձ զգալ նա մանաւանդ դէպի կեղծաւոր դատաւորները: «Կաշառակեր, յափշտակող անխիղճ տակնանող»: արտնջումէր նա այնպիսի դառը ըռպէներում, սակայն զգուշութեամբ շուրջը նայելով եւ հաւաստիանալով, որ մօտիկ յետաքրքրւող աչքեր ու ականջներ չ'կա՞ն:

Յաճախ Պերիգէլը, սարը բարձրանալով, մի անգամ սկսաւ իւր իշխ հետ խօսել, որն աւանդ նորան չէր լսում: «Ո՞չ, իմ սիրելի, սիրեկանա, ո՞չ, անհամեմատելի կենդանիս. Հիմի դու ի՞նչ-պէս ես ապրում: Այդ մարդիկը հասկանո՞ւմէն, որ դու ուրիշների պէս չես, սովորած ես իւրաքանչիւր օր գոնէ մի բուռը գարի ուտել եւ նախաճաշել մի կտոր հացով, իսկ նորա քեզ կ'կերակրեն չորացած բողկաթեւով եւ կ'ծեծեն քեզ, երբ կ'սկսես աքացել, յայտնելով, որ փորդ դատարկ է:»

Ամբողջ օրը դագըելով եւ իշխ կորստեան վերայ նեղացած, Պերիգէլը գիշերով տուն դար-

ձաւ, բայց եւ ոչ այնտեղ հանգստութիւն գտաւ: Տիկին Պերիգէլը իւր սովորութեան պէս մարդին յիշոցներով հանդիպեց: Օր ըստ օրէ նա պնդում էր, որ ինքը նախազգուշացնումէր եւ պատմում նորա յիմարութեան բոլոր հետեւանքները եւ ոչ մի դէպքում նորան (մարդին) տանջելուց չէր դադարում: Հարկաւոր չէր միթէ երեխանց շորերի հոգալ քաշել կամ երեւումէր, որ աղքատիկ ընթրիքը բաւականութիւն չէր տալիս փոքրիկ Պերիգէլների ախորժակին, չար մայրը գոռառումէր երեխանց վերայ.

—Գնացէք ձեր հօր մօտ: Նա այնպէս հարուստ եւ այնպիսի բարի հոգի է, որ իւր տունն է ընդունում ամենայն տեսակ փողոցային թափառաշրջիկ. միթէ նա իւր իսկական որդւոց համար կտոր չ'ունի: Ո՞չ ապաքէն մաւրը նորան ոոկտ մէջ թաղեց, միթէ նա ափսոսումէ տալ ձեզ գոնէ մի կտոր...

Թվումէր, որ երեէք ոչոք բարի գործ կատարելու համար չ'պէտք է այնքան շարչարուի, ինչպէս Պնդիդէլը: Առաջ պատահումէր, որ եթէ կինը իւր ճղաւոց—բղաւոցով չափազանց զգուեցնումէր, Պերիգէլը վերջ էր տալի մի որ եւ է կատակով. իսկ հիմա ամբողջ օրերով բերանը չէր բանում, որովհետեւ պստիկ ջրբերի միակ ցանկութիւնն էր շուտով մաւրին հետեւել:

Մի անգամ, համբերութիւնը հատաւ կնոջը

լսելով: ուստի դժբաղուացնող արկղիկը յատա-
կի վերայ շպրտեց: Արկղիկը բացուեցաւ, մագա-
ղաթի ծրարը եւ կիսայրուած մոմը յատակի վե-
րայ թափուեցան: Պերիգէլը վրայ ընկաւ, որ բո-
լորը կրակն ածէ: սակայն տիկին Պէրիգէլն ամե-
նը վերցրեց:

—Եթէ գու չես կարող կարդալ, ինչ որ այդ
տեղ գրուած է, գոնէ մոմը տուր պահեմ, կա-
րելի է պէտք գայ. իսկ արկղիկում կարելի է
փող պահել: Եթէ ձեռքներս կ'ընկնի:

Պերիգէլը մագաղաթը գրեց գրպանում, որ
արաբական լեզուն իմացող մարդի ցոյց տայ: Ամ-
բողջ գիշեր մագաղաթը Պերիգէլի աչքի առա-
ջից չէր հեռանում, եւ առաւտեան նա վճռեց,
որ այն զուր չէր պահչուած արկղիկում, որ մեռ-
նող մաւրը այնպիսի դատարկ բաները չէր կարող
այդպէս զգուշութեամբ իւր մօտ պահել. Պերի-
գէլը փողոց գնաց, ուր էր իւր ծանօթ մաւրը.
Ցոյց տուեց նորան մագաղաթը եւ խնդրեց բո-
վանդակութիւնը յայտնել: Ծերունին ուշադրու-
թեամբ կարդաց այն, աչքերը չ'հեռացնելով, ոկսեց
իւր երկար մորուքը հարթել:

—Այստեղ գրուած է Ալգամբրում թագցրած
գանձի մասին, խօսեց նա վերջապէս:

Տաքութիւնը Պերիգէլի գլուխը խփեց: Նա,
քորելով իւր գանգրամազ ծոծրակը, վերջապէս,
ոյժը ժողովեց եւ վախվիսելով ասաց.

—Ալգամբրում գանձ է թագուցած: լաւ,
գորանից ի՞նչ կ'դուրս գայ, որիմ մասաց մասաց
ամ ծոմսակի. մէջ ասուած է, թէ որտեղ է
պահուած գանձը: միջնան ոմ զօուս և մասմէ
Գնանը . . . իսկոյն, ժառան և մարդու

—Այստեղ անէծք է գրուած, առանց որին
չի կարելի գանձն ստանալ, շարունակեց մաւրը:
մասմէկարծես Պերիգէլին ցուրտը սառոյց կտրեց.
նա գունատուած դողումէր ողջ մարմնով:

—Այս, բացի նորանից, այստեղ ասուած է,
ընթերցանութեան ժամակ պէտք է մոմը վառել,
որի պատրոյցք հիւսել է մի հնդկացի կախարդ
կին եւ կնքուած է Սոլոմոնի եօթը կնիքներովը:
առանց մոմի ոչինչ չի կարելի անել:

Պերիգէլը մոաբերեց արկղիկում գտնուած
մոմը. նա նոր հասկացաւ, թէ ի՞նչի համար էր ա-
նիծքաթղթի հետ միասին դրուած եւ, իւր գուշա-
կութիւնները ծերունուն հաղորդելով, առաջարկեց
նորան առաջիկայ գիշեր գանձի յետեւից գնալ:

Պերիգէլը մագաղաթը վեր առաւ եւ ջրի
գնաց, որովհետեւ դեռ գիշերը հեռու էր: Զկա-
մենալով կնոջ մէջ կասկած զարթեցնել իւր գի-
շերային զբոսանքի մասին, նա, ուշ յետ գառնա-
լով, յայտնեց, թէ ձանապարչին փող կորցրեց:
Այդ առթիւ իւր գլխին ընկնող կայծակին քա-
ջութեամբ դէմ դնելով, եւ մոմն ուզելով, գնաց
աղբիւրի մօտ, որ փողն որսնի:

Երբէք դեռ այնպէս թեթեւ եւ ազատ չէր շունչ քաշել Պերիգէլը, իւր ծանօթ շաւիղով վեր բարձրանալիս. երբէք այնպէս չէր շտապել նա, ինչպէս այսօր: Նա մաւրին գտաւ, աւազանի մի կողմում նստած, բոլորովին նման մեռած անծանօթ մարդին:

—Մոմը բերեցի, շշնջեց Պերիգէլը, հազիւ թէ յոդնածութիւնից ու վրդովմունքից շունչն իրան քաշելով, —գանձը մենք կէս կ'անենք. . .

—Ես այնպէս դողացնում եմ, ընդհատեց նորան ծերունին, —որ վախենում եմ մնացած ատամներիս փշրուելուց: Երկիւղ եմ կրում, որ չ'կարողանամ անէծքը կարդալ:

Լաւ, ինչպէս որ լինի, երկուսով մի բան կ'անենք...

Զգուշութեամբ անցնելով փշերի եւ թփերի միջով, Պերիգէլն ու մաւրը ուղեւորուեցան դէպի մի փոքրիկ շինութիւն՝ աշտարակի ստորոտի մօտ: Մուտքը փակուած էր թփիկներով եւ քարերով: Երկար աշխատելուց յետոյ քարերը հեռու գըլորուեցան: Շինութեան ներսից խոնաւութեան հոտ էր փչում: Մի ինչոր բան թեւերը խփեց: Ոդի մէջ սուր ճիշ տարածուեցաւ. —Պերիգէլը եւ մաւրը հազիւ —հազ կենդանի մնացած՝ մուտքից գուրս թռան: Աղաղակը կրկնուեցաւ: Ականջ գընելով, իմացան, որ բուի ձայն է:

Նոցա սրտերը խիստ բարախում էին. սառը

քրտինքը ողողեց բոլոր մամինները: Նոքա մտան աշտարակի մէջ: Այդ միջոցին Պերիգէլը իմացած — չիմացած բոլոր աղօթքները մրմնջում էր:

Մեր քաջերը մոմը վառեցին եւ սկսան շինութեան ներսը զննել, ուր իրանք էին գտընվում: Անկիւններից մէկի մէջ, յատակում շրջանաձեւ անցք երեւեցաւ եւ նորա մէջ աւերուած սանդուղքի վշրանքներ. դա տանում էր դէպի ստորերկրեայ բնակարանը: Նոքա, սրտապնդելով, մի կերպով ներքեւ սողացին: Օդն այնպէս փակուած — փչացած էր, որ մոմը հազիւ էր վառվում: Լարձուն աճեղն ու մամուռը յատակը եւ պատերը ծածկել էին. երկու — երեք գետնագորտ դժգոհութեամբ եկորներին էին նայում:

Մի քանի ժամտնակ կանգ առնելով, յաղթելով ահին, նոքա սկսեցին շոշափելով պատերը որոնել. զննում էին մագաղաթում յիշուած, պատի մէջ դուրս փորուած «Ալլահ» (Աստուած) բառը: Այդտեղ հարկաւոր էր անէծքը կարդալ:

Մերունին մագաղաթը բացեց, աչքերը նորա վերայ կթեց, շրթունքները շարժուեցան, բերանից բառ չ'գուրս եկաւ... դէմքը սարսափելի կերպով գունատուեցաւ: Կարծես գետնի տակից աեսիլ դուրս սողաց եւ կանգնեցաւ Պերիգէլի առաջեւ: Մեր Պերիգէլը քաջ մարդ չէր, բայց այստեղ մի տեսակ վայրենի աներկիւղութիւն նորան տիրեց, նա փոխուած ձայնով գուռաց. «կարդալ:»

Պերիգէլի. Ճայնը մաւրին կախաբդեց՝ անէծք-
ները մէկը միւսի յետեւից թափփումէին. նորա
անհասկանելի էին, բայց երկիւղն աւելի եւ ա-
ւելի հալածփումէր. Այժմ հարկաւոր էր պատի
մէջ այն քարը որոնել, որը, ինչպէս էլ մագաղա-
թի վերայ էր նշանակուած, գանձի մուտքը վա-
կումէր:

Նրկար ժամանակ որոնելով եւ քարը չ' գտնե-
լով՝ անյաջողութիւնից ուժաթափփուած, նորա
կանգ առան: Յոգնած աչքերը մոլորուածի պէս
պատի վերայ էին մանածում: Աչա նա. յանկարծ
բղաւեց Պերիգէլը, եւ երկուան էլ միասին ցոյց
տուած տեղի վերայ ընկան:

Շուտով քարը պոկուեցաւ. քարի տակից մի
ինչ որ սեւ բան երեւեցաւ—այդ կաւէ սափոր
էր: Ապրծուն մամուռի վրայ ոտը սահելով կու-
ժը ձեռից դուրս պրծաւ, վայր ընկաւ եւ կտոր
—կտոր եղաւ: Ոսկին ճայն արձակեց: Պերիգէլը
վայր ընկաւ: Այստեղ երեւեցաւ մի արկդիկ հա-
րուստ քառամանեակով (օշերուե): Ծերունին
շարժուել չէր կարողանում, կարծես քարից լի-
նէր՝ նեզութիւնը եւ երկիւղը բոլորովին ջարդե-
ցին նորա զառամեալ ոյժերը:

—Դուրս գնանք, ծերուկ, օդը քեզ կ'կազ-
դուրէ, որոն առնելով, դէպի նորան դարձաւ.

Դժուարութեամբ մաւրին դուրս տարաւ սուոր,
երկրեայ բնակարանից, դարձեալ քարը մուտքի վե-

բայ գլորեց եւ ազատ ջունչ քաշեց միայն պարզ
աստղալից երկնքի տակ: Օդը ծերունուն էլի կեն-
դանացրեց: Նստելով, նոքա աւարը իրանց մէջ
բաժանեցին:

Անկարելի է նկարագրել այն գորգուոցներն
ու յիշոցները, որոնցով տիկին Պերիգէլը պատա-
հեցաւ իւր մարդին: Երբ որ բարկութիւնն անց-
կացաւ, սկսեց բարձր ձայնով լաց լինել, ասելով.

Խեղճ իմ գլուխ, անբաղդ կին: Չար մար-
դիկը թալանեցին մեր տունը, իսկ անպիտան
մարդս էլ սկսել է ամբողջ գիշերներով թափառել
Աստուած գիտէ թէ ուր. երեխանց եւ կնոջ մա-
սին մտածել էլ չի կամենում:...

Պերիգէլը միայն ծիծաղումէր: Վերջապէս
նա ականջ գնելով ձանձրացաւ:

Լաւ, կին, քիչ հեծկլան, ուրախ—ուրախ
սկսեց նա, —Աստուծոյ կարմիր արեւը մեղ էլ
լուսաւորեց,—բաւաշկան էր մեր քաշած քաղցը...

Այ գու, անպիտան... ընդհատեց նորան
կինը, բայց յանկարծ նորա աչքերի առաջին ոս-
կին փայլեց:—Աւաշազակ, էլի ում կողոպտեցիր,
կրկին նորա վերայ յարձակուեցաւ տիկին Պերի-
գէլը... եւ նորա հայհոյանքները հեղեղի պէս խեղճ
ջրերի գլխին թափուեցան:

—Ասիր, կին, սրտանց սկսեց նա: —այս բոլորը
մենք ստացանք այն մաւրի շնորհիւ, որին գու
այնպէս վատաբանում էիր, եւ որ ես կարծում

Եի նա գերեզմանից յարութիւն կ'առնի, որպէս
զի քո չար լեզուն լռեցնէ:
Երբ Պերիգէլը իւր գրպանները դատարկեց
եւ ողջ որսը սեղանի վերայ դրեց, քիչ մնաց,
որ ուրախութիւնից տիկին Պերիգէլը խելքը չ'ը-
կորցրեց:

Հետեւեալ առաւօտեան տնտեսութեան մէջ
բոլոր պակասութիւնները լրացուեցան, իւրեանց
համար նոր զգեստներ գնուեցան, իսկ երեկո-
յեան, Պերիգէլը գործի մէջ բանեցնումէր իւր
նոր ընկերին—նոր իշուկին:

Պերիգէլները լաւ կեանք էին վարում: բայց
հարեւանուհիներն անհանգստանումէին՝ նոցա
սրատես աչքերը հետեւումէին Պերիգէլների շու-
տափոյթ փոփոխմանը—հարստանալուն, եւ լե-
զուններ էին, որ չարախօսումէին, ականջները
սրում... .

Տիկին Պերիգէլն ամուր էր պահում իւր
շփոթարար լեզուն: Ինքն էլ, Պերիգէլն, առա-
ջուանից աւելի ջերմեռանդութեամբ սկսեց ջուր
կրել, որ այլոց աչքերը վակէ:

Յաճախ, մարդի բացակայութեան ժամանակ,
տիկինը փակվումէր իւր սենեակում, կտակած
արկղից հանումէր թանկագին քառամանեակը
եւ նորանով զարդարուած՝ երկար ժամանակ
կոտրած հայելուց չէր հեռանում: Բայց շուտով
նոր զգացմունքն սկսեց նորա կուրծքը կրծել-

այլեւս հայելին նորան չէր մխիթարում, նորան
մարդի աչք էր հարկաւոր, —եւ ահա մի գեղեցիկ
օր այդ ցանկութեան աշխայժը չ'թողեց համբե-
րել՝ հանդարտ դուռը բացուեցաւ եւ փողոցում
երեւեցաւ տիկին Պերիգէլը, կարծես մի թագու-
հի, հարուստ զարդարանքի մէջ:

Դարձեալ դուռն արագութեամբ խփուե-
ցաւ, բայց դրացուհիները չէին քնած. շրջա-
կայքում լեզուններ էին շշնջում եւ, իրանք էլ
չիմանալով ինչպէս, Պերիգէլները կանգնած էին
դատաւորի առաջ:

Այս Բնչ է. խստաբար նոցա հանգիպեց դա-
տաւորը, բուռը ոսկով լցրած: —Ուրեմն մաւրը ոչ-
Բնչ չ'ունէր, բացի անպէտք արկղից, հա՞: Կա-
խաղանն արդէն քեզ պէս աւազակին վազուց էր
սպասում:

Պերիգէլը ծնկան վրայ չոքեց ու մանրամաս-
նաբար պատմեց ոսկու ուրտեղից յայտնուիլ:

Դատաւորը, պօլիցիական աստիճանաւորը եւ
սափրիչը, առանց որին ոչ մի գործ չէր կատար-
վում երբէք, բերանը բաց լսումէին. նոցա աչ-
քերը ագահութիւնից փայլումէին:

Մի բոպէի մէջ մաւրին գտան փողոցում.
գունաթափուած—ինչպէս մահ, դատաւորի առա-
ջըն եկաւ նա: Պերիգէլի բոլոր պատմածներն
ստոյգ երեւեցան:

Դատաւորը սաստիկ վրդովուած էր եւ կար-

ծումէր, որ ստորերկրեայ բնակարանում պէտք
է որ շատ ոսկի լինի, եւ թէ Պերիգէլը ճշմա-
րիսաչէր խօսում իրք թէ այնտեղ ընդամէնը
մէկ սափոր էր: Նա դատապարտեց Պերիգէլին
եւ մաւրին՝ նոցա սատանայի հետ ունեցած յա-
րաբերութեան պատճառաւ եւ յայտարարեց, որ
ինքն անձամբ կամենումէ համոզուել թէ նոցա-
յանցանքի չափը ո՞րքան է: Նա Ալբամբրա գնա-
լիւ ժամանակը գիշերուայ 11 ժամին նշանակեց,
իսկ մինչեւ այն ժամանակ՝ հրամայեց դատող-
ներին բանոտ դնել:

Ճիշտ 11 սաժին դատաւորը եւ անփոխա-
րինելի սափրիչը, Գրանադայի գուներից զուրս
գնացին: Նոքա ապահով բարձրացան սարը. այդ
ճանապարհը միայն Պերիգէլին դժուար երեւե-
ցաւ: Ընկած քարը նոքա աշտարակի մէջ գցե-
ցին, դատաւորը ստորերկրեայ բնակարան տանող
անցքի առաջ բաւական մասանց, — կիսայրուած
մոմի տատանւող բոցը աղօտ լոյս էր արձակում:
Նա Պերիգէլին եւ մաւրին հրամայեց առաջ գնալ:
Ինքն էլ սկսեց իջնել — շարժուեցան մի տեսակ
ահագին, ոեւ երեւոյթներ կարծես դէպի նորստ,
Նէնչին իկրեանց երկար ձեռները: Դատաւորի
դլուխը պտոյտ եկաւ, ոտները սահեցան լարձուն
— թաց սանգուզքի կոտրատուած աստիճանների
վերայ, եւ գլուխը դէպի առաջ մեր դատաւորն
ընկաւ ստորերկրեայ բնակարանը... Մաւրի ձեռ-

քից մոմն ընկաւ, իսկ լուսոյ հետ անհետացան
եւ սեւ տեսիլները: Գերեզմանական լռութիւն
տիրեց...

Մի քանի ժամանակից յետոյ, գունաթափ,
ինչպէս ստուերներ, Պերիգէլը մաւրը եւ աստի-
ճանաւորը դուրս սոզացին պարզ աստղաշատ
երկնքի տակ. հազիւ — հազ կենդանի գուրս ե-
կաւ եւ սափրիչը... միայն դատաւորը չկար:

Կուռ, կարծես անբաղդութեան հետ հաշ-
տուելով, քաղաք իթան եւ սկսեցին մոտածել, թէ
փորձանքից ի՞նչպէս ազատուեն...

լոյցի պայտացայց բնձուրց միացաւած
և բազման համար բառու դուռն ու լոյց
մասն այլու ժայռեանց ուսուր բառնու-
ցան մանեւ այլու զույգու կը մնաւ այլու զույց
այց զոյթեանց ուսուր մասն այլու այլու ու լոյց
մասն այլ զանուրացնի վեցի մասն այլ հայտն
ուրաց. և հայտն բնու պատուառ զանուրացնի
ուրաց բնու ուրաց լուսու ընաւու մի խի
զույգու ու զանուրացնի զույգու պատուառ և
մասն այլ պատուառ ու ուսուր այլուց
այլ պատուառ մաս ուսուր և այլ պատուառ զույց
հայտն ուրաց ուրաց պատուառ զույց պատուառ
ուրաց ու զանուրացնի մասն այլու զույց
մասն այլ պատուառ ու ուսուր այլուց զույց
մասն այլ պատուառ ու ուսուր այլուց զույց
մասն այլ պատուառ ու ուսուր այլուց զույց

աշխարհքի երեսին շատ անգամ է ճանապարհորդութիւն արել եւ լուռ ու վատ տեսել, իսկ այժմ հանգստանումէ: Պապը նստած է փափուկ թաւիշով ծածկուած բազկաթոռի վերայ, իսկ ժամացոյցը զրուած է պահարանում, թաւշեայ բաց կարմիր բարձի վերայ:

Այդ ժամացոյցը շատ մեծ է եւ հաստ արծաթեայ պատեանում, կործնթարթ ապակիով եւ պատկերանման սլաքներով: Վաղուց արդէն նա իւր բարձի վերայ է դրուած եւ կամաց—կամաց չղկչղկումէ: Պատլիկ թռուր շուտ—շուտ պապի սենեակն է մոնում եւ երկար ժամանակ զուարճանում նորանով:

— Ի՞նչ լաւ է, որ ժամացոյց ունենք, ասում է երեխան.—նայում ես նորա վերայ,—եւ իմանում ես, թէ որքան ժամանակ կարող ես զբանել, երբ պէտք է գասերն սկսել:

— Տիկ—տակ—տիկ, պատասխանումէ ժամացոյցը, բայց կար ժամանակ, երբ մարդիկ չեն իմանում ժամանակ հաշուել, այլ միմիայն կարողանումէին տարին եղանակների եւ օր ու գիրի բաժանել: Ամառը՝ ի հարկէ, կարելի էր արեգակի վերայ հաշուել, բայց գիշերով եւ խուլ աշնանը բոլորովին վատ էր լինում:

Երկար ժամանակ մարդիկ մոտածումէին հընարել զանազան գործիքներ ժամանակը հաշուելու համար, բայց նոցա ամենեւին չէր յաջողում:

ԶՈՒ

Քաղաքային ընդարձակ հրապարակի վերայ
կայ մի մաքուր տնակ կանաչ տանիքով եւ
սպիտակ պատուհաններով: Նորա ամեն—մի
քայլից երեւումէ, որ տէրերը սիրումեն մաք-
րութիւն եւ կարգ—կանոն պատուհաններից քաշ
ընկած են կիսէի վարագոյրներ եւ դարսած են
ծաղիկներ. առաստաղի տակ կախած է վանդա-
կով մի սոխակ, կանաչ գործուածքով ծածկու-
ած դռների պղնձեայ փականները եւ կոթերն
այնպէս մաքուր են, որ կրակի պէս այրվումեն:
Բայց ամբողջ տան մէջ շատ բան պարունա-
կող սենեակը, առանց վիճելու, ծեր պապի
սենեակն է, իսկ նորա մէջ ամենահետաքրքրա-
կանը պապի ծոցի հին ժամացոյցն է: Այդ ժա-
մացոյցը իւր ժամանակին մեծ ծառայութիւն
է արել շատ է աշխատել պապի հետ միասին,

Մի անգլիացի թագաւոր մտածեց որոշեալ մեծութեամբ կերոններ շինել, որ տեսնի թէ ամեն—մի օր ո՞րքան է այրվում եւ յետոյ, մէկը միւսի յետեւից վառելով ժամանակի ընթացքը որոշի. բայց այդ յարմար էր միմիայն թագաւորներին եւ հարուստ մարդկերանց՝ որովհետեւ պիտի կերոնները միշտ վառուէին, եւ գիշեր—ցերեկ հարկաւոր էր լինում հսկել նոցա վերայ՝ նորը վառելու, հենց որ կայրուէր — կ'վերջանար մէկը: Այնուհետեւ մտածեցին աւելի հաստատուն գործիք գտնել՝ այդ էր աւազի ժամացոյցը: Վեր էին առնում երկու ապակեայ շիշնեղ պարանոցներով, նոցանից մէկի մէջ ածում էին մանր աւազ եւ յետոյ պարանոցները միմեանց յետ այնպէս միացնում: Որ աւազը կարողանար մէկից միւսի մէջ թափուել: Հենց որ վերեւի շիշից աւազը ներքեւինի մէջն էր թափվում, — նորան վերեւ էին շուռ տալիս եւ աւազը նորից սկսում էր անցքովը թափուել: Այդ գործիքը շատ հասարակ է եւ աժանագին, սակայն այն անյարմարութիւնն ունի, որ նորան միշտ հսկել հարկաւոր է: Վերջապէս պատի ժամացոյն էլ հնարուեցաւ: Ի՞նչպէս եւ ո՞վ առաջինը մտածեց շինել այդ հաշքը, ոչ ոքի յայտնի չէ, բայց կարծում են որ, այդ գիւտի պատիքը հարկաւոր է արաբներին վերաբերել եւ ասում են, որ արաբացւոց Հարունալ—Ռաշիդ խալիֆը 807 թուին ֆրանսիաց-

ոոց թագաւոր Կորոլոս Մեծին ընծայ ուղարկեց: Այն ժամանակուայ ժամացայցները շատ կատարեալ չէին՝ նոքա անձայն էին եւ անձոճանակ: Դա յարմարեցրին ժամացոյցի վերայ միայն 17 — երորդ դարում: Հենց ժամանակին աւելի միշտ որոշելու համար՝ իւրաքանչիւր ժամ 60 րոպէների բաժանուեցաւ եւ իւրաքանչիւր լու պէ — 60 վայրկեանների: Պատի կամ աշտարակի ժամացայցի գիւտող մարդկերանց համար մեծ բարեբազութիւն էր, բայց նորանով շատ քչերը կարող էին օգտուիլ, եւ այդ միայն թագաւորներն ու իշխանները: Եւ ժամացայցը նոցա մօտ այնպէս էր պահպանվում, ինչպէս մի հազուագիւտ առարկայ: Ճանապարհորդութեան ժամանակ այդպիսի ժամացոյցը իւր մեծութեան պատճառով հարկաւ, պէտք չէր գալիս: Ինչ որ վերաբերում էր հասարակ աղքատ ժողովուրդին, նոքա գարձեալ առաջուայ պէս պարտաւորուած էին բաւականանալ արեգակի ցոյց տուածով, եւ հարկաւոր էր գեռ էլի շատ աշխատել, որ աւելի յարմար եւ աւելի արժան ժամացոյց շինէին: 16 — երորդ դարու սկզբում նիւրենբերգ քաղաքում ապրում էր մի պղնձգործ, անունը Պետրոս Գէլէ: Նա նիւրենբերգում ապրեց մինչեւ ծերութիւնը եւ համարվում էր պատուաւոր եւ լաւ մշակ մարդ: Պետրոս Գէլէն, բացի իւր արհեատից, նոյնպէս հետաքրքրվաւմ էր մերենայտ-

գործութեամբ։ Նամանաւանդ աւելի ձգտողութիւն ցոյց առ եց նա յիշեալ գիտութեանն այն ժամանակից սկսած։ Երբ միանգամ նորան մի իտալացի պատահեցաւ որի հետ նա իւր ճանապարհորդութեան ժամանակ ծանօթացել էր Ֆլորենցիայում։ Այն ժամանակիցն սկսած՝ ծերունին բոլորովին իւր առաջուայ արհեստը թողեց ու ողջ օրերը միայն այն էր անում, որ կարգում էր գրեքը, նկարում ու փորագրում էր զանագան պտուտակներ (ՎԻՒՏԵ) եւ անիւներ։

Գէլէի կինը եւ երկու չափահաս որդիքը չ'կարողացան հասկանալ, թէ ի՞նչու այնտեսակ աշխատասէր ծերուկը իւր գործքը թողեց, եւ առաւոտից մինչեւ երեկոյ նորան յանդիմանում էին եւ հայհոյում։ Ա, երջապէս խոզուկին այնտեղ հասցրեցին, որ նա ստիպուած էր «փասափուսէն» հաւաքել իւր ամուսնացած աղջկայ մօտ ապրելու։ Աղջիկը հօրը շատ էր սիրում եւ պատրաստ էր կատարել ամեն բան, ինչ որ կարող էր, նորան հանգստացնելու բայց նա ինքն էլ հարուստ չէր եւ բացի դորանից, նորա դերձակ մարդը շատ հետաքրքիր էր եւ առհասարակ ոչ մի ըոպէ հանգստութիւն չունէր սկսեալ այն ժամանակից, երբ ծերունին իրանց մօտ տեղափոխուեց։ Որովհետեւ դերձակը ամենափոքը հասկացողութիւն անգամ չ'ունէր մեքենագիտութեան վերայ, ուստի զանազան պտուտակներ, անիւներ

եւ գործիքներ, որոնց հետ էր իւր օրն անցնում Պետրոս Գէլէն, նորան մի ինչ որ անբնական էին երեւում եւ նա իւր աներոջ ամեն—մի քայլակիուը նախաղիտում էր։

Մի գեղեցիկ օր գերձակն ազատ ըովէ գլտաւ, երբ ծերունին տանից հեռացել էր, նա էլ մտաւ սենեակը, որ արձակ համարձակ իւր հետաքրքրութեանը բաւականութիւն տայ։ Նորա զարմանքը ո՞րքան եղաւ, երբ երկաթէ լարի կտորների, պղնձի, երկաթի եւ փայտի կտորների մէջ նա տեսաւ մի փոքրիկ կլոր առարկայ, որ մի տեսակ թխկթխկում եւ չխկը չխկում էր։ Նա սկզբում մտածեց, թէ այդ երեսոյթ է. մեքենան գրեց մէկ ականջի վերայ, միւսի վերայ՝ ճկճկոցը չ'կտրուեց։ Այն ժամանակ գերձակը ենթագրեց, որ շընանի մէջ արդար բան չէ նատած եւ, պատին տալով այն, որքան ոյժ ունէր, սենեակից դուրս փախաւ, երեսը խաչակնքելով եւ աղօթք կարդալով։ «Ահա պատուեի աներս, ահա թէ ի՞նչու դու միշտ թագնվում ես։ Կինդ ու որդիքը իզուր չ'վոնտեցին քեզ տանից։ Դու ստանայի հետ ես բարեկամութիւն հաստատել եւ նորան մեքենայի մէջ նստեցրել։ Խոնարհ ծառաւ, ես մտադիր չեմ սատանայի հետ մի կտուրի տակ ապրել՝ էլ ի՞նչ բարեք քեզ հետ դէպի դատաստան չես տանիլ»։

Ծերունին տուն դառնալով եւ իւր գործը

փչացրած տեսնելով՝ յուսահատուեցաւ, իսկ յիմար փեսայի յիշոցները նորան բոլորովին համբերութիւնից հանեցին։ Առնելով իւր գործիքներն ու նիւթերը, ամրացրեց մի կապոցում եւ սկսեց հեռանալ—փախչել առանց յետ նայելու։

Մանր է լինում եւ երիտասարդութեան ժամանակ, երբ մարդիկ չեն հաւատում մեր աղնիւ եւ հոգեկան դիտողութիւններին, բայց աւելի դժուար է ծերութեան ժամանակ, երբ մարդերկար ապրելու յոյս չունի եւ վախենում է մեռնել իւր մտքերը դեռ չգործադրած։

Խեղճ Պետրոս Գէլէն շատ տրտումէր։ «Երեւի միմիայն բանտում ինձ ոչոք չի խանգարի», մտածեց նա եւ ուզզակի դատաւորի մօտ գնաց։

Դատաւորը հենց նոր էր վերջացրել իւր զբաղմունքները եւ կամենումէր ճաշելու գնալ։ Նա շատ զարմացաւ, տեսնելով նոր խնդրատու։

—Պարոն դատաւոր, գէպի նորան դարձաւ վրդովուած։ Պետրոսը,—բարերարութիւն արեցէք ինձ՝ հրամայեցէք ինձ բանտ նստեցնել։

Լսելով այդպիսի օտարոտի խնդիր, դատաւորը եւս աւելի զարմացաւ. կարծեց, թէ ծերունին խելքը կորցրել է եւ ուշադրութեամբ նայեց նորա վերայ։

—Բայց ի՞նչի համար ես կամենում բանտ նստել հարցրեց նա։

—Ես զբաղուած եմ մի շատ կարեւոր գործով, որը պիտի ինձ հարստացնէ, պատասխանեց Պետրոսը,—բայց իմ անբազութիւնից ոչ մի անկիւնում ինձ համար տեղ չեմ գտնում որ գործովս զբաղուեմ։ Եթէ գուք ինձ բերդ նստեց նէք, այն ժամանակ ինձ ոչ ոք չի խանգարիլ եւ ես բոլորովին բազդաւոր կ'լինիմ։

Զուր տեղ զատաւորն աշխատումէր հաւատացնել օտարոտի խնդրատուին, որ բանտն տմենեւին այնպիսի պահտաւոր տեղ չէ, որ նորա մէջ մտնել աշխատելն արժենար։ Ծեր մեքենայապետն այնպէս աղաջումէր իւր խնդիրքը կատարելու համար, որ նա, վերջապէս, զիջաւ եւ հրամայեց բանտ տանել նորան։ Դատաւորը ծերունով շատ էր հետաքրքրվում եւ, ցանկակալով նորա մասին մանրամասնաբար իմանալ գնաց նորա տուն ու սկսաւ կնոջը հարց ու փորձ անել։

—Իմ մարդը խելագարի մինն է, պատասխանեց կինը—նա իւր գործը բոլորովին թողեց եւ ամբողջ օրերով գրքերի ու մի ինչ որ անպիտան բանի յետեւից շուռ է գալիս։

Որդիքը նմանապէս մօր խօսքերը հաստատեցին։ Այն ժամանակ դատաւորը դարձաւ գէպի աղջիկը եւ փեսան։

Փեսայի ցուցմունքներն աւելի վատ էին. նա հաւատացնումէր, որ իւր աները ոչ միայն ոշնչի

է պիտանի, խելագաղը մարդ է, այլ որ նա սատանայի հետ է բարեկամութիւն անում եւ որ հարկաւոր է նորան մի հեռու տեղ կորցնել:

Խեղջ աղջիկը լաց էր՝ լինում եւ որքան կարողանում էր՝ հօրը պաշտպանում էր, բայց ոչ որ նորա խօնքը լոել անդամ չէր կամենում:

Չնայելով իւր ունեցած համակրութեանը դէպի ծերունին, դատաւորը կասկածանքի մէջ ընկաւ վերջապէս, նորա առողջ դատողութիւն ունենալու վերայ եւ հրամայեց, որ Պետրոսի բոլոր ազգականները հաւաքուին, որ նոցա ներկայութեան ժամանակ հարցնէ նորան համոզուելու նորա ճիշտ խառնուած լինելում:

Նշանակեալ օրը Պետրոսի բոլոր ազգականները դատարան հաւաքուեցան. բանտը մարդ ուղարկեցին եւ բանտարկեալին գուրս բերեցին:

Նա ներս մտաւ խաղաղ եւ ուրախ, եւ այնպէս խելացի ու պարզ էր նայում, որպիսին Աստուած հենց ամենաառողջ մտածող մարդուն է պարզեւում: Նա ձեռքին մի փոքրիկ բան ունէր բռնած, ձուի նման, որի մէջ մի բան ձկնացնում էր:

Պարոն դատաւոր, ասաց Պետրոսը, — ահա թէ ի՞նչի համար էի թախանձում բանտ նատել. ես իմ բարեկամ իտալացու հետ երկար ժամանակ մեքենայափոքութիւնն ուսումնասիրում էինք, երկար մտածում եւ քննում էինք աշ-

տարակի ժամացուցի կազմութիւնը եւ, վերջապէս, մենք մտածեցինք այսպիսի ժամացոյց շինել, բայց միայն փոքրիկ: Բարեկամն կամենում էր ինձ գրքեր մատակարարել եւ խորհուրդներ տալ, իսկ ես աշխատել խոստացայ: Բայց մենք պայման դրեցինք մեր գործը գաղտնի պահել, որ ծաղրատեղ չդառնանք, նամանաւանդ որ մեզ մօտ, նիւրենքեգում, շատ լաւ մեքենայապետներ կան եւ ես երկիւղ էի կրում իմ գործը ցոյց տալ, մտածելով, որ իսկոյն իմ մտադրութիւնն ինձնից կ'յափշտակեն: Այժմ գործս վերջացած է, եւ էլ աւելի թագնուել չեմ կամենում:

Այս խօսքերից յետոյ նա մեքենան ցոյց տուեց: Դա ծոցի ժամացոյց էր կամ նիւրենքեցէան յու, ինչպէս նորան անուանում էին՝ ձուածեւ լինելու պատճառով:

Բոլոր դատաւորները եւ ներկայ գտնուողները զարմանքով Պետրոս Գէլէի ժամացոյցը զըննում էին, իսկ նա ամեն—մէկին ցոյց էր տալիս եւ կազմութիւնը բացատրում:

Կինն ու որդիքը ստիպուած էին խոստովանուել իւրեանց տգիտութիւնը եւ ներողութիւն խնդրել ծերունուց. աղջիկն ուրախութիւնից արտասուք էր թափում, որ հայրն արդարացաւ իսկ թերահաւատ փեսան հաւատաց, որ մեքենայի մէջ չար հոգի չկար:

Նուտով այս գիւտի լուրը հռչակուեցաւ

ողջ Նիւթենքերդում՝ եւ բոլորն սկսեցին պատռել արհեստառոր Գէլէին:

Առաջին ծոցի ժամացոյցի պատմութիւնն
այսպէս է:

in missis. Tunc vobis illa dicitur quod ad
eum mundissi et iuncti supplicio nulli
adiret. Unde quod ex parte dicens est. In
eiusmodi missis. Tunc vobis illa dicitur quod ad
eum mundissi et iuncti supplicio nulli
adiret.

158. *Prognosticatio* *Post* *iniquitate* *proculdatur* *in*
anxiis *ad* *punc* *ad* *litteras* *ad* *opus* *difficile*

¶ In iugurtham qd ist M. iugurthae. 5. 11.
¶ In iugurtham qd ist M. iugurthae. 5. 11.

etiam quod dicitur quod inquit ut quoniam
in omnibus est. Quod si invenimus illud. Unde

ՀՀ Ազգային գրադարան



NL0248468

